1. Հղում կատարելով հետևյալ դրույթներին.

   «Կենտրոնացված մոնիթորինգի հարթակ (սերվեր/ամպային միջավայր) – 1 հավաքածու»
   և
   «Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իրականացնել համակարգի ներդրումը և այն ամբողջությամբ ինտեգրել Պատվիրատուի սերվերային միջավայրում…»

խնդրում ենք տրամադրել հստակ պարզաբանում հետևյալի վերաբերյալ.
Կենտրոնացված հարթակը պետք է՝
ա) տեղադրվի Պատվիրատուի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքում (on-premise մոդել),
թե՞
բ) ընդունելի է Մատակարարի ենթակառուցվածքում տեղակայված (cloud/SaaS մոդելով) լուծումը:

---

2. Հղում կատարելով հետևյալ դրույթին՝
   «այն ամբողջությամբ ինտեգրել Պատվիրատուի սերվերային միջավայրում»,

խնդրում ենք պարզաբանել՝ արդյոք նշված ձևակերպումը ենթադրում է համակարգի ֆիզիկական տեղադրում Պատվիրատուի սերվերների վրա, թե վերաբերում է բացառապես տրամաբանական ինտեգրմանը (օրինակ՝ ցանցային հասանելիություն, VPN մուտք, ծառայությունների կամ API-ների ինտեգրում)՝ առանց համակարգը Պատվիրատուի ենթակառուցվածքում տեղադրելու պարտավորության:

---

3. Խնդրում ենք ներկայացնել հստակեցումներ:

Այն դեպքում, եթե պահանջվում է համակարգի ներդրում Պատվիրատուի ենթակառուցվածքում, խնդրում ենք նշել՝

- ով է ապահովում անհրաժեշտ ապարատային ռեսուրսները (CPU, RAM, տվյալների պահպանման ծավալներ, պահուստավորում),
- արդյոք Պատվիրատուն տրամադրում է վիրտուալացման միջավայր,
- արդյոք ապահովված են կրկնօրինակման (redundancy) մեխանիզմները և էլեկտրասնուցման անխափան աղբյուրները (UPS),
- արդյոք տրամադրվում են IP հասցեավորում, DNS ծառայություններ, Internet/VPN հասանելիություն,
- ինչ պահանջներ են սահմանվում firewall-ների կազմաձևման և հաղորդակցման պորտերի բացման վերաբերյալ:

---

4. Խնդրում ենք նաև պարզաբանել,

թե Պատվիրատուի որ միջավայրի և գործող որ տեղեկատվական համակարգերի հետ պետք է իրականացվի Կենտրոնացված մոնիթորինգի հարթակի ինտեգրումը։ Անհրաժեշտության դեպքում խնդրում ենք մասնավորապես նշել՝

- ներգրավվող համակարգերը (օրինակ՝ ոստիկանության տեղեկատվական համակարգեր, տվյալների բազաներ, CAD համակարգեր, ահազանգման համակարգեր),
- ինտեգրման ծավալը (API ինտեգրում, տվյալների փոխանակում, հաշվետվությունների ձևավորում),
- արդյոք նախատեսվում է պատմական տվյալների միգրացիա։

---

5. Հղում կատարելով հետևյալ դրույթին՝
   «Ռադիոհաղորդիչ (Beacon, RF կրկնիչ) – 1 միավոր (ընտրովի)»,

խնդրում ենք տրամադրել հստակ պարզաբանում հետևյալի վերաբերյալ.

ա) արդյոք Beacon / RF կրկնիչի մատակարարումը պարտադիր է յուրաքանչյուր համակարգային հավաքածուի կազմում, թե այն հանդիսանում է հայեցողական բաղադրիչ՝ համաձայն պահանջների։

բ) այն դեպքում, եթե բաղադրիչը հայեցողական է՝

- ով է ընդունում դրա կիրառման վերաբերյալ որոշումը (Պատվիրատուն, թե Մատակարարը),
- պայմանագրային գործընթացի որ փուլում է ընդունվում համապատասխան որոշումը (մրցութային փուլ, պայմանագրի կնքում, թե համակարգի շահագործման փուլ),
- արդյոք տվյալ բաղադրիչի արժեքը պետք է ներառվի համակարգային հավաքածուի հիմնական գնագոյացման մեջ, թե հաշվարկվի առանձին և կիրառվի միայն դրա օգտագործման վերաբերյալ որոշման ընդունման դեպքում։